ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՎՍՏՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը. **Արմեն Ղազարյան**

2. Զբաղեցրած պաշտոնը. **ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն ծառայության պետ**

3. Գործուղման վայրը և ժամկետները. **Վիեննա, Ավստրիայի Հանրապետություն, 2018 թվականի հոկտեմբերի 16-19-ը**

4. Հրավիրող կողմը. **Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոն (ICMPD)**

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը). **Մասնակցել.**
   1. **Անդրսահմանային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի կոնվենցիայի կողմերի կոնֆերանսի 9-րդ նստաշրջանին (օրակարգը կցվում է),**
   2. **"Միջերկրական քաղաքից-քաղաք միգրացիա" ծրագրի 2-րդ փուլի մեկնարկի հանդիպմանը (օրակարգը կցվում է),**
   3. **Վիեննայի միգրացիոն ամենամյա համաժողովին(օրակարգը կցվում է):**

   Գործուղմանը մասնակցում էր նաև ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն ծառայության արտաքին կապերի բաժնի պետ Հայկանուշ Զոբանյանը:

6. Քննարկված թեմաները.
   1. **Միջազգային համագործակցության աշխատանքային խմբի 10-րդ նստաշրջանի ընթացքում քննարկվեց "Մարդկանց թրաֆիկինգի արձանագրությունը": Նստաշրջանի ընթացքում երկրների պատվիրակները ներկայացրեցին թրաֆիկինգի դեմ պայքարում իրենց կողմից իրականացված աշխատանքները: Քննարկումները հնարավորություն ընձեռնեցին քաղաքականություն մշակողներին և ոլորտի մասնագետներին իրենց տեսակետները փոխանակել գործնական հարցերի շուրջ:**
   2. **"Միջերկրական քաղաքից-քաղաք միգրացիա" ծրագիրը իրականացվում է Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի կողմից և ներկայումս ուսումնասիրվում են նմանատիպ ծրագրի իրագործման ընդլայնման հնարավորությունները Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում: Ներկայումս այն իրականացվում է Միջերկրական տարանցիկ միգրացիոն երկխոսության շրջանակներում, որն իրենից ներկայացնում է ծագման, տարանցման և ընդունող երկրների ոչ-ֆորմալ խորհրդատվական հարթակ՝ Աֆրիկայի, Եվրոպայի և Մերձավոր Արևելքի միգրացիոն հարցերով զբաղվող պաշտոնյաների միջև: "Միջերկրական քաղաքից-քաղաք միգրացիա" ծրագրում ներգրավված են փորձագետներ՝ կատարելագործելու միգրացիայի կառավարումը քաղաքային մակարդակում, ներառելով միգրանտների հասանելիությունը բազային ծառայություններին և մարդու իրավունքներին: Նախնական համաձայնություն ձեռք բերվեց Հայաստանի՝ ծրագրում ընդգրկվելու նպատակով:**

3. **Վիեննայի միգրացիոն բարձրաստիճան համաժողովը Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի (ՄՔՄՄԿ) կողմից կազմակերպվող ամենամյա նշանակալի իրադարձություն է, որն համախմբում է քաղաքական գործիչներին, բարձրաստիճան պաշտոնյաներին, կառավարության փորձագետներին, ոլորտի մասնագետներին, միջազգային կազմակերպությունների քաղաքացիական հասարակությանը, ակադեմիական ներկայացուցիչներին և լրատվամիջոցներին՝ միգրացիոն քաղաքականության մշակման կարևոր կողմերը քննարկելու համար: Միգրացիոն ծառայության ներկայացուցիչները առաջին անգամ էին մասնակցում Վիեննայի միգրացիոն համաժողովին, որն իր տեսակով դարձել է ամենամեծ և հեղինակավոր կոնֆերանսը Եվրոպայում: Այն կենսական դերակատարում ունի միգրացիոն քաղաքականության տարբերակների ուսումնասիրման և ապագա ռազմավարությունների մշակման գործում: 2018թ-վականի համաժողովի խորագիրն էր՝ հաղթահարելով այսօրվա ճգնաժամամը եւ աշխատելով երկարաժամկետ եւ հեռանկարային միգրացիոն քաղաքականության ուղղությամբ: 2018 թվականը վճռական տարի է միգրացիայի համար: ՄԱԿ-ի մակարդակում ամփոփվում է Միգրացիայի և փախստականների համաշխարհային համաձայնագիրը (Global Compact for Safe, Orderly and Regular Migration) և այն պատրաստ է ընդունման համար, որը նաև ներկայացվեց համաժողովի ընթացքում: Ըստ էության, առաջին անգամ համաշխարհային մակարդակում համաձայնություն կհաստատվի անվտանգ, պատշաճ և կանոնավոր միգրացիայի շուրջ: Փախստականների պաշտպանության հետ կապված քաղաքական ճգնաժամի լուծումը և հմուտ աշխատուժի միգրացիայի նկատմամբ Եվրոպայի կարիքների բավարարումը ընկած էին Վիեննայի 2018թ. միգրացիոն համաժողովի հիմքում:**

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

7. **Միջոցառման ընթացքում հանդիպեցի ՄՔՄՄԿ գլխավոր տնօրեն Մայքլ Սփինդլեգերի հետ, ով բարձր գնահատեց Հայաստանի հետ ունեցած արդյունավետ համագործակցությունը և նշեց, որ այն լինելու է շարունակական ու նաև տարբեր ձևաչափերով: Առանձնազրույցներ ունեցա նաև Նիդերլանդների միգրացիայի, արդարադատության և անվտանգության հարցերով նախարար՝ Մարկ Հերբերսի, ինչպես նաև Բրյուսելի ՄՔՄՄԿ գրասենյակի ղեկավար՝ Ռալֆ Գենեցկեի և ՄՔՄՄԿ փոխտնօրեն Մարտայն Փլյումի հետ: Ինչպես նաև համագործակցության հարցեր քննարկվեցին ՄՔՄՄԿ բարձրաստիճան այլ ներկայացուցիչների հետ:**

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը. Չկան

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

23.10.2018թ.